ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 -րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի թիվ 01 հերթական նիստի օրակարգը:

1. Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 38 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21 - ի N 40 - Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3. Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 42 - Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4. Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21- ի N 43- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ

2. ԽԼՂԱԹՅԱՆ ՄՈՒՇԵՂ

3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 02

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 - Ի N38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12 - ի <<Ընդլայնման իրավունքով ուղղակի վաճառքով հողի օտարման մասին>> N38 որոշման մեջ կցել հողամասի իրադրության հատակագիծը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԽԼՂԱԹՅԱՆ ՄՈՒՇԵՂ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ
Կ.Տ
«22» 11 2016 թ.

Քարաշամբ համայնք ին Հողհատկացման հիմքը

Անուն, ազգանուն

Կոտայք — Սարզ

Քարաշամբ — Համայնք

Հասցե

Մասշտաբ 1:500



ՀՈՂԱՄԱՍԻ									ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ	
Մակերեսը (հա)	0.01151 հա	Շրջադարձային (բեկման) կետեր	Կորդինատները Y	Կորդինատները X	Գծային չափերը (մետր)	Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)	Կադաստրային տվյալների գնումը (մուտքագրումը)	Գործառական նշանակությունը (անվանումը)		
Ծածկագիրը	07-066-0118-0026-ից	1	8465830.78	4473298.68	11.78					
		2	8465840.29	4473305.63	13.34					
Նպատակային նշանակությունը	բնակավայրերի	3	8465848.20	4473294.90	4.72					
		4	8465844.32	4473292.22	0.91					
Գործառական նշանակությունը	բնակելի կառուցապատման	5	8465843.57	4473291.70	14.57					
		1	8465830.78	4473298.68						
Հողամասը ծանրաբեռնված է										

Կատարող _____ Արիստակես Ղազարյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 045 տրման ամիս, ամսաթիվը 15.12.2011թ.

Իրավաբանական անձի 282.110.104352 (պետական գրանցման համարը) «ՍԿԶԲՆԱԿԵՏ-2012» ՍՊԸ (անվանումը)

Տնօրեն _____ Ա.Ղազարյան
(ստորագրություն)

21.11.2016թ.

Շրջադարձային (բեկման) կետեր	Կորդինատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
1	8465830.78	4473298.68	11.78
2	8465840.29	4473305.63	13.34
3	8465848.20	4473294.90	4.72
4	8465844.32	4473292.22	0.91
5	8465843.57	4473291.70	14.57
1	8465830.78	4473298.68	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03 - Ն

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 - Ի N40 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21- ի <<Քարաշամբ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 40 - ն որոշման հավելվածի մեջ կատարել փոփոխություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԽԼՂԱԹՅԱՆ ՄՈՒՇԵՂ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 21-ի N 40-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական /շինարարաության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) Հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ:

2) սույն կետի 1- ին ենթակետի ա. պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ:

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ:

գ. 1001- և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

3) Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /հազր հինգ հարյուր/ դրամ:

բ. 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2.Քարաշամբ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների/ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում՝ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1-ին» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Քարաշամբ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 /հինգ հազար հինգ հարյուր/ դրամ:

4.Մինչև 26 քմ Քարաշամբ համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1)Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10.001 դրամ:

2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10.001 դրամ

5. Քարաշամբ համայնքի տարածքում՝

1)Բացօթյա առևտուր կազմակերպելու թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 1քմ.-ի համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ:

2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 150000 / հարյուր հիսուն հազար/ դրամ:

3)Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

4)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 3000 դրամ:

բ. ոչ հիմանական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 /մեկ հազար/ դրամ:

6. Քարաշամբ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Քարաշամբ համայնքի տարածքում՝ առևրտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համարէ՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1)առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ

3) բաղնիքների / սաունաների/ համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ

4)խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 /հարյուր հազար/ դրամ

8. Քարաշամբ համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք

գովազդող արտաքին գովազդի համար `3000 /երեք հազար/ դրամ

3)այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ 2000/երկու հազար/ դրամ

9. Քարաշամբ համայնքի անվանումը ֆիրմային անուն օգտագործելու թույտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

10. Քարաշամբ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

11. Քարաշամբ համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույտվության համար տեղական վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝10000 /տաս հազար/ դրամ:

12. Քարաշամբ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վեցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1)մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակրեսի համար 50 դրամ:

2)1001 քառակուսի մետրից ավել հողամաս ունեցող հողամասերի համար՝ 10000 դրամ գումարած 1000 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 10 դրամ:

14.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ 2000 /երկու հազար/ դրամ:

15.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել ընտանիքի յուրաքանչյուր շնչի հաշվով ամսեկան 100 /հարյուր /դրամ:

16.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 1 տոննա աղբի համար 10000 /տաս հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21- Ի N42- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21- ի<< Քարաշամբի համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի և պաշտոնական դրույքչափեր հաստատման մասին>> N42 - Ա որշման և հավելվածի մեջի <<Համայնքի>> բառը փոխարինել << Համայնքապետարանի>> բառով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԽԼՂԱԹՅԱՆ ՄՈՒՇԵՂ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 05 -Ն

ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21 - Ի N43 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Քարաշամբ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21 - ի << Քարաշամբ համայնքի 2017 թվականի բյուջեյի հաստատման մասի>> N 43 - Ն որշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՉԻԿ
2. ԽԼՂԱԹՅԱՆ ՄՈՒՇԵՂ
3. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐՄԵՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԶՈՐԻԿ ԽԼՂԱԹՅԱՆ**